

ԱՄՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԴԻԱՏՈՂՆԵՐԻ 2-րդ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Պ. թ. սեպտեմբերի 28-ին կայացավ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի ասպիրանտների 2-րդ դիտական սեսիան:

Սեսիայում բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի դիրեկտոր ընկ. Գ. Հովնանը: Սեսիայի նպատակն է,— իր ելույթում ասաց ընկ. Գ. Հովնանը,— հնարավորություն տալ մոտիկից ծանոթանալու երիտասարդ կադրերին, հոգ տանել, հետևել նրանց գիտական մակարդակի աճմանը:

Սեսիայում «երազանքը և գիտաֆանտաստիկան» թեմայով առաջինը ելույթ ունեցավ ինստիտուտի լաբորանտ Ն. Ալալյանը: Զեկուցողը ընտրել էր քիչ կամ համարյա չուսումնասիրված մի բնագավառ՝ երազանքի և գիտաֆանտաստիկական ժանրի բնագավառը: Աղալյանի դատողություններն այդ թեմայի շուրջը աչքի էին ընկնում ինքնատիպությամբ: Նա իր ղեկուցման մեջ բավականին հետաքրքիր դատողություններ արեց գիտաֆանտաստիկական ժանրի առանձնահատկությունների մասին: Սակայն, այդ բոլորի հետ, հարկավոր է նշել, որ Աղալյանի ղեկուցումը դուրս չէր որոշ վերացականությունից: Նրա էքսկուրսները ղեկի հին անցյալը, երազանքի ծագման ու զարգացման մասին նրա դատողությունները երբեմն շատ էին ընդհանուր: Շատ հաճախ էլ նրա դատողությունները բավական անվերապահ էին, մանավանդ նրա պնդումը, թե գիտաֆանտաստիկական ժանրի առանձնահատկությունը հանդուժ է լուկ «գեղարվեստական կերպարանավորման» ձևին:

Զ. Հովհաննիսյանի Բաքվի շրջանի գործունեության մասին ղեկուցեց Մ. Պողոսյանը: Նա իր ելույթի մեջ հանգամանորեն անդրադարձավ Հովհաննիսյանի գիտական կենսագրության քիչ ուսումնասիրված մի շրջանին, քանի որ 1918 թ. Բաքվում տեղի ունեցած ղեկավարի հետևանքով Ադրբեյջանի ժողովրդական կրթության արխիվները և դրա հետ միասին նաև Հովհաննիսյանի աշխատանքային գործունեության վերաբերյալ գրեթե բոլոր փաստաթղթերը ոչնչացվել էին: Մ. Պողոսյանը նշեց, որ Հովհաննիսյանը Բաքվում վարելով Փաղաքային վարչության ուսումնարանական հանձնաժողովի նախագահի պաշտոնը, տարիներ շարունակ, եռանդուն աշխատանք է վարել: Լամուլի և այլ նյութերի հիման վրա ծանոթանալով Հովհաննիսյանի Բաքվի շրջանի գործունեությանը, ղեկուցողը իր ելույթում առանձնապես շեշտեց մեծ բանաստեղծի գործունեությունը ոչ միայն հայկական, այլ նաև ադրբեյջանական ինտելիգենցիայի շրջաններում: Առանձնապես հետաքրքիր էր ղեկուցման այն մասը, որտեղ խոսվում էր Հովհաննիսյանի և ադրբեյջանցի բանաստեղծ Նազիֆ-բեկ Վեզիրովի բարեկամության մասին: Նոր նյութերի հիման վրա Մ. Պողոսյանը մանրամասն անդրադարձավ Հովհաննիսյանի մանկավարժական գործունեությանը: Ազգամիջյան պայքարի հրահրման պայմաններում Հովհաննիսյանը բազմազգ Բաքվի յուրաքանչյուր ազգային փոքրամասնության անբաղկատելի իրավունքն էր համարում ունենալ իր ազգային դպրոցները և մանուկ սերնդին դաստիարակել մայրենի լեզվով:

Կլանված լինելով կուլտուր-հասարակական և մանկավարժական գործունեությանը, Հովհաննիսյանը այդ տարիներին քիչ է ստիզածագործել: Սակայն իր թատերագիտական և մանկավարժական հոգիվածներում առավել հստակությամբ դրսևորել է իր ժողովրդասիրությունը, անսահման նվիրվածությունն ու հավատը ժողովրդի ստեղծագործական ուժերի նկատմամբ:

Դրա լավագույն ապացույցը սովետական կարգերի անվերապահ ընդունումն էր և Ստ. Շահումյանի, Նարիմանովի և Օրջոնիկիձեի մեծ հարգանքը նրա նկատմամբ:

Հետաքրքիր էր Ի. Սաֆրազրեկյանի ելույթը՝ ճապոնական հեթաթյունները Զ. Թումանյանի թարգմանություններում թեմայով: Նա ձգտում էր բացահայտել Թումանյանի թարգմանական վարպետության առանձնահատկությունները: Զեկուցողը, մեր կարծիքով, միանգամայն ճիշտ է վաբել, որ իր ուշադրությունը կենտրոնացրել է ճապոնական երկու հեթաթ «Չկնոս Ուրաշիմո» և «Էնդուն կտրած ծիտիկը» հեթաթյունների վրա: Ճապոններն լեզուն չիմանալու պատճառով Թումանյանը այդ երկու հեթաթյունները թարգմանել է Սիտինի ուսերեն թարգմանություններից: Սակայն նա ղերի չի մնացել այդ թարգմանություններին: Մի շարք այլ վարիանտներ համեմատելով Թումանյանը կարողացել է նոր շունչ հաղորդել այդ հեթաթյուններին: Զեկուցողը իրավացիորեն

նշեց, որ Քումանյանը երբեք չի ձգտել բառացի ճշտության, այլ՝ հենելով հեքիաթի ժանրային առանձնահատկություններից, վերարտադրել է թարգմանվող ստեղծագործության գաղափարական ու պոետիկական բուն էությունը:

Ուշագրավ էր «Մ. Քաղիադյանի գրական ժառանգության շուրջը» զեկուցումը, որը կարդաց ՀՍՍՌ Գրականության և արվեստի թանգարանի գիտաշխատակից Զ. Միրզաբեկյանը: Նա հետաքրքիր փաստերով մեկնաբանեց Մ. Քաղիադյանի կյանքը և ստեղծագործությունը: Զեկուցողը բնորոշեց Քաղիադյանին որպես գրողի, գիտնականի, հրապարակախոսի և մանկավարժի, որը իր արտահայտած առաջավոր գաղափարներով վեր էր բարձրացել ժամանակի խավար մտայնությունից, իր կյանքը և գործունեությունը նվիրելով հայրենիքին, հայ ժողովրդին անշահախնդիր ծառայելու գործին: Զեկուցողն արխիվային փաստաթղթերի հիման վրա խոսում է Մ. Քաղիադյանի անտիպ և տակավին անհայտ հարուստ գրական ժառանգության մասին, որի հայտնաբերումը և հրատարակումը զգալիորեն կհարստացնի նրա կյանքի և գործունեության ճիշտ թնութագիրը:

Ինստիտուտի ասպիրանտ Պ. Մուրադյանը զեկուցեց «Պատմություն Պղնձե քաղաքի» զրույցի հայկական և վրացական պատումների ու նրանց փոխհարաբերության շուրջը: Նա խոսեց «Պատմություն Պղնձե քաղաքի» իր հետազոտությունների արդյունքների մասին, քննելով այդ զրույցի փոխազդեցությունների և տարբերակների գոյության հարցը: Նշելով հայկական երեք պատմական միմյանց նկատմամբ ունեցած աղերսը, հակառակ բանասեր Ն. Ակինյանի, Մուրադյանը գտնում է, որ Գ. Աղթամարցու «Լուսածառ» պատմը առաջացել է 13-րդ դարի Առաքել Անեցու (Շիրակավանցու) թարգմանության հիման վրա: Այսպիսով, բացի 10-րդ դարի նորահայտ պատմից, զեկուցողը քննում է երկու հետագա խմբագրություններ նս, և պարզում նրանց թյուժետային-լեզվական, գեղարվեստական փոխհարաբերությունները:

Պ. Մուրադյանը խոսում է հայկական և վրացական համառոտ և ընդարձակ պատումների մասին և եզրակացնում, որ վրաց ընդարձակ պատմը թարգմանված է հայերենից 18-րդ դարում, իսկ համառոտը, որի մասին մինչ այժմ ոչինչ հայտնի չէր, թարգմանված է 10-րդ դարում, վրաց թագավոր Դավիթ Կուրոպաղատի օրոք: Այսպիսով, զեկուցողը 10-րդ դարում նույն սկզբնաղբյուրից հայերեն և վրացերեն թարգմանված տեքստերի հիմամբ, մի քանի եզրակացությունների է հանգում. այլ խնդիրների հետ միասին, նա նշում է, որ Տայթր և Կղաջք 10-րդ դարում շարունակում էին մնալ իրրև երկլեզու բնակավայրեր՝ հայ և վրաց, և որ սխալ է այն համոզումը, թե Տայթր և Կղաջքի շրջանում գրական փոխհարաբերությունները պարփակված էին միայն դավանական միասնությամբ՝ երկարնակությամբ:

Մ. ՄԵԼԻՔԵԱՆ